Հ. Ռ. ԻՍՐԱԵԼՅԱՆ

ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՀԵՏՔԵՐԸ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Նախնադարյան ժամանակներից մեզ հասած նյութական մշակույթի մնացորդները, ինչպես նաև հայ ժողովրդական բանահյուսության ու ազգագրության հարուստ տվյալները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմելու Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների գաղափարական պատկերացումների, և, առանձնապես, արևի պաշտամունքի մասին։

Մեր առջև ծառացած այս խնդրի լուծմանը էապես օգնում են նաև Հին արևելքի՝ Միջագետքի ու Եգիպտոսի առասպելները, որոնց միջոցով հնարավոր է դառնում հնագիտական առարկաների վրա պատկերված կոմպոզիցիոն սյուժեների ավելի խորը մեկնաբանումը։

Վերոհիշյալ բոլոր նյութերի ուսումնասիրությունից պարզվում է, որ բրոնզեդարյան Հայաստանի բնիկները, ինչպես ամենուրեք՝ այլ երկրներում, արևին վերագրել են արարչական զորություն, պաշտել են այն, որպես կենսահաստատ զորության՝ զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժի։ Այդ պատճառով էլ բազմաթիվ առարկաների վրա նրանք պատկերել են արևը՝ երկրաչափական մարմինների, ինչպես և դանազան կենդանիների տեսքով։ Ավելի ուշ՝ արևը ներկայացվում է նաև անտրոպոմորֆ կամ մարդկային կերպարանքով։

Ինչպես Հին արևելքի, այնպես էլ Հայկական լեռնաշխարհի համար բնորոշ է արևի անմիջական կապը ճառագայթավոր անիվի հետ։ Այդ պատճառով էլ Հայաստանի բրոնզեդարյան արվեստի հուշարձաններում հաճախ են հանդիպում անիվաձև սկավառակներ՝ բազմաթիվ ճառագայթներով և զարդանկարային բարդ մոտիվներով, առանձին կամ կրկնակի սկավառակներ, որոնց վրա ձուլմամբ ամրացված են թռչունների փոքրիկ ֆիգուրներ կամ շղթաներով կախված բրոնզե ծակոտկեն թռչնակներ։

Լճաշենի, Շամշադինի, Ախթալայի, Ռեգկին լագերի և այլ դամբարաններում[1] հանդիպում են նաև բրոնզե և ծարիրե խաչեր, սվաստիկաներ կամ խաչակարդ սկավառակներ։

Հին հայերի մոտ, դեռևս Եղնիկ Կողբացու ժամանակներում (մ. թ. 5-րդ դ.) և ավելի ուշ, շարունակում էր պահպանվել արևի պաշտամունքը։ Բանավիճելով հեթանոսական գաղափարաբանության դեմ և փառաբանելով քրիստոնեական աստծուն, Կողբացին բերում է հեթանոսական պաշտամունքի դիպուկ մեկնաբանման օրինակներ։ Նրա կողմից բերված պաշտվող արևի նկարագիրը կարծես ընդօրինակված լինի մեր հնագիտական նյութերից։

«Եւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան։ Եւ ինքն

---

[1] С. А. Есаян, Амулеты, связанные с культом солнца древней культуры Армении (принято в СА); *ինչպես նաև Պետ. Էրմիտաժ, ինվ. 17996։*

մի է և բազում, և բազում է և մի. որպէս արեգակն մի է և բազում, զի մի անիւ է և բազում ճառագայթք»[2]։

Բազմաթիվ դեպքերում արևը խորհրդանշող երկրաչափական պատկերները կապված են երկնային այլ լուսատուների սիմվոլների հետ։

Այսպես, Կիրովականում հայտնաբերված մ. թ. ա. 8-րդ դարի բրոնզե մի գոտու վրա պատկերված է արևը յոթ թևանի աստղի ձևով[3]։ Թևերի միջև տեղավորված շրջանակները արևի շուրջը պտտվող լուսատուներ են։ Հնարավոր է, որ այս յոթնյակն ամբողջությամբ իրենից արեգակնային մի համաստեղություն է ներկայացնում, որը գտնվում է երկրաչափական այլ տարրերի ու ոճավորված կենդանիների՝ հավանաբար, խեցգետինների միջավայրում։

Արևի և լուսատուների պաշտամունքի հետ կապված նման մոտիվների հանդիպում ենք նաև խեցեղեն առարկաների վրա։

Հետաքրքիր է Արթիկի ուշ բրոնզեդարյան (8—12-րդ դդ. մ. թ. ա.) դամբարաններից մեկում գտնված մի սև կճուճ, որի վրա պատկերված եռանկյունիներն ու նրանց միջև գետեղված սվաստիկաները խորհրդանշում են լեռներն ու արևը[4]։

Հայաստանի տարբեր վայրերում գտնված վաղ երկաթի ժամանակաշրջանի սև և մոխրագույն խոշոր անոթների ու սափորների վրա (Կիրովական, Գոլովինո, Լալվար և այլն)[5] ներկայացված են ռելեֆ կենտրոնական գնդիկներ և սև փայլով ճառագայթվող բազմաթիվ շառավիղներ, որոնք գետեղված են կամարաձև կիսաշրջանների մեջ։ Անշուշտ, դրանք էլ երկնակամարում շողացող արևի արտահայտություններ են։

Հնարավոր է, որ արևի խորհրդանիշներ կրող այս անոթներն ու սափորները օգտագործվում էին հնում նրա պաշտամունքին նվիրված ծիսակատարությունների ու ար.արողությունների ժամանակ։

Արևի և անիվի նմանողությունից բնականորեն կարող էր ծագել նաև արևի ու սայլի, կառքի, մարտակառքի իմաստաբանական կապը։ Այս տիպի առասպելական ու գրաֆիկ պատկերներ առանձնապես հաճախ են հանդիպում արևելյան միֆերում և արվեստի հուշարձաններում, ինչպես նաև հայոց առասպելներում, հեքիաթներում և բրոնզեդարյան գոտիների պատկերազարդ սյուժեներում։

Ըստ այդմ արևը երկնակամարում իր պտույտը կատարում էր հրեղեն ձիերով կամ եղներով լծված սայլի կամ կառքի վրա, երբեմն էլ շրջագայում է երկնային օվկիանոսում նավակով՝ (իր քրոջ կամ եղբոր) լուսնի հետ միասին։

Այդպիսի մի պատկեր է ներկայացնում 1902 թ. Զեելանդ կղզում հայտնաբերված բրոնզեդարյան անիվավոր սարքը, որի վրա դրված է արևի օղաձև

---

2 Ե զ ն ի կ ա ։ (վարդապետի Կողբացւոյ) Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 142։

3 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1961, էջ 216, նկ. 85։

4 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, стр. 128, табл. 29, 3.

5 А. А. Мартиросян, նշվ. աշխ., աղ. XXII, 1, 2։

սկավառակը (աղ. I, 3)։ Միլլերը գրում է, որ արևի այս սկավառակը, որը մի կողմից ծածկված էր ոսկե թիթեղով, կապված է եղել ձիու հետ[6]։

Համանման մոտիվ է ներկայացված Հայկական լեռնաշխարհում՝ Ախթալայի մ. թ. ա. 8-րդ դարի դամբարաններից մեկում Մորգանի կողմից հայտնաբերված բրոնզե գոտու բեկորի վրա։ Այստեղ պատկերված է երկձի մարտակառք կամ երկանիվ սայլ՝ մարդակերպ կառավարով, որն իր ձեռքում ունի սկավառակատիպ մի առարկա[7] (աղ. 1, 2)։

Կարելի է ենթադրել, որ սայլին նստած էակը՝ ինքը արևային աստվածությունն է։

Երկնային սյուժե ունի նաև Լճաշենում հայտնաբերված բրոնզե գոտին[8]։

Հնարավորություն չունենալով մոտիկից, մանրամասն ուսումնասիրելու այդ գոտին մենք պետք է բավարարվենք թռուցիկ ակնարկով միայն և նշենք, որ նրա վրա նրբաճաշակ ու վարպետ փորագրությամբ, կոնտուրային ու գրաֆիկ արվեստով ներկայացված են մարդկային ֆիգուրների տարբեր մասերում փորագրված մի քանի շրջանակներ և երկարավիզ ջրային թռչուններ, որոնք կապված են արևի պաշտամունքի հետ։

Հին Միջագետքում, Եգիպտոսում և Հունաստանում, արևը նույնպես շրջագայում էր հրեղեն ձիերով լծված սայլակով, կառքով կամ մարտակառքով։

Շանտեպի Դե-լա Սոսեյը գրում է, որ «Բաբելոնյան արձանագրությունների մեջ հանդիպում է նաև արևի աստծո պոետիկ կերպարը, որը իր ծառաներով գնում է արևային կառքի մեջ բազմած, կառավարելով նրան լծված հրեղեն ձիերը, որոնց ծնկները հոգնել չգիտեն... Երբ նա բաց է անում երկնային դարպասները և գլուխը բարձրացնում է աշխարհի վրա, ամբողջ աշխարհը ծածկվում է լույսով և մարդիկ մեծ երջանկությամբ նայում են նրան՝ բոլոր արարչությունների հովվին, երկինքն ու երկիրը լուսավորողին, լայնատարած երկրի դրոշակակրին։ Միայն նա է անցնում անծայրածիր ծովի վրայով,—ուրիշ ո՞վ, բացի նրանից կարող է անցնել նրա վրայով։ Փայլը նրա ընկնում է օվկիանի վրա և լայնատարած, հզոր ծովը սարսափում է նրա լույսից,—որը վախ սփռելով, սողոսկում է և անտեսանելի երկրներ...»[9]։

Շումերական Նաննար աստվածը՝ «ամեն երեկո նստում էր իր նավակը և կամաց սահում երկնակամարով։ Հոգնելով, նա իջնում էր երկրային օվկիանի ջրերը՝ հանգստանալու և նրան փոխարինում էր Ուտուն (որդին), որը երևան էր գալիս արևելյան հորիզոնում։ Նրա դեմքը փայլում էր շատ ավելի վառ, քան իր հորը և նրա ճառագայթների տակ խամրում էին աստղերն ու մոլորակները։

---

6 А. А. Миллер. Элементы неба на вещественных памятниках. Изв. ГАИМК. 100. стр. 125.

7 J. de Morgan, Mission scientifique au Caucase, t. 1. Paris. 1899. էջ 141. նկ. 145։

8 Ցավոք, արևի պաշտամունքն ուսումնասիրելու տեսակետից այդ կարևոր հնագիտական հուշարձանը, որ պատահաբար հայտնաբերվել է տասը տարի առաջ, մինչև օրս մնում է Հայաստանի պետական պատմական թանգարանի սեյֆում պահված, անձեռնմխելի, թանգարանը հնագիտական բաժնի վարիչ Հ. Մնացականյանի տրամադրության տակ.

9 Д. П. Шантепи-де-ля Сосей, История религии, т. 1. 1899. Москва. стр. 194—195.

Հսկայական կառքով սլանում էր Ուտուն երկնքով և նրա ժպիտը պայծառեցնում էր երկիրը»[10]։ Հայտնի է, որ Ուտուն արևի աստվածն էր։

Իր սյուժեով Լճաշենի գոտուն շատ մոտ է կանգնած նաև Լեռնային Ղարաբաղի Խաչբուլաղ կոչվող դամբարանադաշտի 1962 թ. պեղումներով Գ. Պ. Կեսամալու կողմից № 4 քարարկղում (11—8-րդ դ. մ. թ. ա.) հայտնաբերված բրոնզե գոտու բեկորը[11] (աղ. I, 1,)։ Սրա եզրերը զարդարում են երկու կողմից գծիկներով շրջապատված նույն երկշարք վազող պարույրները։ Գոտու վրա պատկերված են մարդկային երկու էակներ։ Նրանցից առաջինը մի ձեռքում վահան է բռնել, մյուսում՝ նիզակ։ Գլխին կրում է վետրավոր բարձր գլխարկ։ Վահանից ցած կա մի փոքրիկ շրջանակ՝ մեջը իրար հատող գծերով։

Մարդակերպ մյուս էակը զինված է նետ ու աղեղով։ Նետի մոտ պատկերված են սակրաձև մարմիններ։ Մարդկանց միջև գտնվում է ձիերով լծված երկանիվ կառքը։ Ձիերն ունեն նեղ, երկար իրաններ և համեմատաբար կարճ վերջավորություններ։ Սրանք շատ մոտ են Լալայանի կողմից Սևանի ավազանում հայտնաբերված գոտու վրա պատկերված ձիերին։

Սայլի անիվների չորսական շառավիղները նման են ճառագայթների վնջերի. ըստ երևույթին, դրանով իսկ կամեցել են շեշտել անիվների և սայլի կապը արևի հետ։ Այստեղ սայլը ուղեկցում է առջևում կանգնած հսկայամարմին էակին։ Երկրորդ մարդակերպ էակին ուղեկցում են ցուլեր և եղջերուներ։ Հնարավոր է, որ մարդակերպ այս պատկերները տարբեր պաշտամունքներ են արտահայտում։ Սրանցից մեկը կարող է ներկայացնել արևի աստվածությունը՝ ոտքերի մոտ գտնվող սիմվոլիկ ճառագայթավոր շրջանակով։

Մյուսին ուղեկցող ցուլերն ու եղջերուները, ինչպես նաև սակրատիպ մարմինները բնորոշ են ամպրոպի ու կայծակի աստվածության համար։

Ուստի, պետք է ենթադրել, որ այս դեպքում մենք գործ ունենք ամպրոպի (տարերքի) աստվածության հետ։ Հետաքրքիր է, որ արևելյան և հին հայկական առասպելաբանության մեջ էլ արևի և ամպրոպի աստվածություններն ամենուրեք հանդես են գալիս միատեղ, ինչպես այդ դիտվում է Ղարաբաղի նորահայտ և բրոնզեդարյան ու ուրարտական մի շարք այլ գոտիների վրա։ Հաճախ կառքի փոխարեն արևը հանդես է գալիս նավակով՝ երկնային օվկիանոսում շրջագայելիս։

Հայկական ժողովրդական բանահյուսության, ինչպես նաև արևելյան դիցաբանության մեջ նման բանաստեղծական կերպարներ չավազանց հաճախ են հանդիպում։

Մի ծով կա, Երեսին Ֆիր ու ախպեր ման են գալի գյամով[12]։

«Ախպերն ու քիրը» մեկնաբանվում են իբրև արևի և լուսնի աստվածություններ։

Նախնադարյան արվեստի հայաստանյան ու անդրկովկասյան հուշարձանները մատնանշում են այս գաղափարի չափազանց հինավուրց՝ նեոլիթյան կամ էնեոլիթյան ակունքները։

---

[10] Д. Г. Редер. Мифы и легенды древнего Двуречья. Москва, 1965, стр. 29.

[11] Г. Кесаманлы. Погребение с бронзовым поясом из Хачбулака, СА, 3, 1966, стр. 221, рис. 4.

[12] Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 7։

Ա. Քալանթարի կողմից Արագածում հայտնաբերված ժայռանկար կոմպոզիցիաներից մեկում ներկայացված է այս գաղափարն արտահայտող մի բարդ սյուժե[13] (աղ. II, 1)։

Կոմպոզիցիան բաղկացած է երկու մասից։ Արևի աստվածությունը ներկայացված է կոմպոզիցիայի ձախ մասում՝ նավակին կանգնած թևերը վեր պարզած մարդկային կերպարով։ Սրանից քիչ հեռու գալարվող օձ է պատկերված։

Կոմպոզիցիայի երկրորդ մասը ժայռանկար պատկերաքանդակների վերին շարքն է, որտեղ երկու մարդ իրենց ձեռքերի վրա պահում են մի նավակ՝ մեջը նստած մարդկանցով։ Մարդկանցից մեկի գոտկատեղին նիզակ է ամրացված։ Սրանց հաջորդում է չորքոտանու վրա կանգնած մի մարդկային ֆիգուր, նույնպես վեր պարզած թևերով։ Այնուհետև, փորագրված են դարձյալ մարդիկ՝ տարբեր կենդանիների հետ միասին։

Թվում է, թե այս կոմպոզիցիայի առաջին մասում մենք գործ ունենք գիշերվա իմաստ արտահայտող սյուժեի հետ, որի համար հատկանշական է լուսնաձև մարմինն ու նավակավոր մարդը, որը, ամենայն հավանականությամբ, մայր մտած արևի գաղափարն է արտահայտում, մինչդեռ՝ երկրորդ շարքում նավակը պահված է բարձր՝ ձեռքերի վրա, իբրև ծագող արևի խորհրդանիշ, որը շրջում է երկնակամարում կամ երկնային ծովում իր նավակով։ Ճիշտ նույն ձևով է պատկերվում արևը վերը նշված հանելուկում։

Հին Եգիպտոսում արևի Ռա աստվածը շրջագայում էր երկնակամարում առագաստանավով։ Եգիպտոսի մեռած փարավոններն էլ թաղման ծիսակատարությունների ժամանակ ներկայացվում էին նավակով։ Այս արարողություններից և պահպանված բնագրերից պարզ երևում է, որ եգիպտական թագավորը պատկերացվել է Ռա աստծուն համազոր։

«Թռչում է նա, թռչողը... թռչում է նա ձեզնից, ով մարդիկ։ Երկրի վրա չէ նա այլևս, երկնքում է նա... Քո նավակն է թիավարում նա, Ռա, քո նավակում է նա կառավարում երկնքում, իսկ երբ դու դուրս ես գալիս արևելյան հորիզոնի հետևից, նա լողում է քեզ հետ քո նավակում, ով Ռա, ով Արև»[14]։

Արևի պաշտամունքի հետ կապված մարդակերպ աստվածությունը նախնադարյան արվեստի հուշարձաններում երբեմն էլ պատկերվում է առանց կառքի, սայլակի կամ նավակի։

Ոլնակի (Ակներ) դամբարաններից մեկում (մ. թ. ա. 7—6-րդ դդ.) Տակայշվիլու կողմից հայտնաբերված բրոնզե դաշույնապատյանի վրա ներկայացված է չափազանց հետաքրքիր մի կոմպոզիցիա՝ արտահայտված դրվագման տեխնիկայով ստացված կետավոր գնդիկների միջոցով[15] (աղ. III, 2)։

Այստեղ արևը պատկերված է միաժամանակ և երկրաչափական տարրերի ձևով և մարդկային կերպարանքով (Պետ. Էրմիտաժ, ինվ. 1673)։

Ամբողջ պատկերը պատյանի վրա բաժանված է երեք մասի. վերին մասում զետեղված է մեծ շրջանակ, որի կենտրոնից ցրվում են բազմաթիվ շառավիղներ։

---

13 Լ. Ա. Բարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», № 3, 1966, էջ 149, նկ. 7։

14 А. А. Нейхардт, И. А. Шишова, Семь чудес древнего мира, Ленинград, 1966, стр. 26.

15 А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, табл. XVII,8.

Երկրորդ մասի վերևում և ներքևում պատկերված են եռաշարք անկյուն կազմող թեքեր և կորեր, որոնց միջև եղած տարածությունը գրաղեցնում է մարդակերպ էակը՝ վեր պարզած թևերով և տարածած ոտքերով։ Նրա երկու կողմերում սվաստիկաներ կան, իսկ գլխավերևում և ոտքերի մոտ՝ փոքր շրջանակներ։

Երրորդ մասում՝ պատյանի ծայրում, նույն եռաշարք թեքերն ու կորերն են և նրանց միջև տեղավորված շրջանակը՝ մեջը խաչվող գնդիկավոր գծերով։

Պետք է ենթադրել, որ պատյանի երեք մասերում արտահայտված է արևը՝ տարբեր ձևերով։ Վերին և ներքին մասերում այն ունի երկրաչափական արտահայտություն, որը հենց շատ մոտ է արևի ճառագայթավոր անիվի պատկերին, իսկ մեջտեղի մասում, նա ունի մարդկային կերպարանք։ Մարդու երկու կողմերում պատկերված սվաստիկաները ընդգծում են նրա արևային բնույթը։ Շատ հնարավոր է, որ մարդը՝ ինքը արև-աստվածն է։

Հայաստանի Կույբիշև գյուղում (Ջարխեչ) հայտնաբերված մի դաշույնի վրա պատկերված են ուղղակի արևը խորհրդանշող սվաստիկաներ[16]։

Ինչպես վերը նշեցինք Լճաշենի և մի շարք այլ գոտիների ու իրերի վրա արևը ներկայացվում է նաև իբրև թռչուն։

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ էլ արևը հաճախ է ընդունում թռչունի կերպարանք։ Այդ միտքը արտահայտված է ինչպես ստորև բերված, այնպես էլ մի շարք այլ հանելուկներում։

Մեյ (մեկ) խավք մը կա իլանի
Բանձրակտուց սիլանի
Կուտ կուտէ երկրի,
Կերթա թառի Բերկրի։

կամ՝

Խավք ըմ ընցավ էրկնուց,
Ոսկի լական կեր կտուց[17]։

Պատահական չէ, որ Լճաշենի հարուստ դամբարաններում, ինչպես նաև Հայաստանի այլ վայրերում (Արթիկ, Բայազետ և այլն) գտնվել են թռչունների բրոնզե արձանիկներ կամ շղթաներից կախված բադիկներ։ Շղթաների վերին ծայրերը մեծ մասամբ ամրացված են լինում գնդով կամ սկավառակով[18]։

Թռչունը, ինչպես մատնանշում է Բ. Բ. Պիոտրովսկին, բոլոր կրոններում սերտ կերպով կապվում է երկնքի հետ և հաճախ հանդիսանում արևային աստվածության արտահայտություն[19]։

Շատ դեպքերում էլ թռչունների փոխարեն շղթաներից կախված են գնդիկներ, որոնք նույնպես արևի կամ լուսատուների իմաստն են կրում իրենց մեջ[20]։

Ավելորդ չէ այստեղ հիշեցնել, որ «Սասնա ծռերի» Մհեր-Միհր-Արևը նույնպես անքակտելիորեն կապված էր ագռավի կերպարի կամ «ագռափուքարի» հետ, որը արևի մայրամուտի վայրն էր։

16 Ս. Ա. Եսայան, նշված հոդվածը։

17 Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1960, էջ 97։

18 А. А. Мартиросян. Армения в эпоху поздней бронзы и раннего железа, стр. 198, рис. 77,3,4,5,6,7; Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 75, աղ. 5, նկ. 3, 4։

19 Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 93.

20 А. А. Миллер, Элементы неба на вещественных памятниках.

Այսպիսով, ստացվում է, որ թռչունն ու գունդը հավասարազոր են և որոշ դեպքերում փոխարինում են մեկը մյուսին։

Միջին բրոնզեդարյան (մ. թ. ա. 2-րդ հազ. 1-ին կես) գունազարդ անոթների վրա արևի գնդերը երբեմն ուղեկցվում են նույն լողացող թռչունների պատկերներով, հաճախ էլ պատկերվում է սրանցից մեկը կամ մյուսը, մարմնավորելով իրենց մեջ արևի պաշտամունքը (Գառնի, Կարմիր, Էջմիածին) (աղ. II, 4)։

Հայ ազգագրական և բանահյուսական նյութերի մեջ ամենից ավելի հաճախ հանդես է գալիս ծիծեռնակի և արագիլի պաշտամունքը։ Սրանք գարունը ավետաբերող թռչուններ են, ուստի և պետք է ենթադրել, որ հնագիտական իրերի վրա արևը խորհրդանշող թռչունները ներկայացրել են գարնանային արևը։ Ստացվում է, որ արևը տարվա տարբեր ժամանակներում, տարբեր կերպարանքով է պատկերացվել։ Գարնանային թռչուն-արևին հաջորդում է ամռան տաք, կիզիչ արևը՝ առյուծի կերպարանք ընդունած, մի կենդանու, որը համարվում էր ամենահզորը բոլոր կենդանիների մեջ, ուստի և խորհրդանշում է բնության ամենազորեղ ուժը։

Ամռան արևի առյուծակերպ տեսքը ընդհանուր է ողջ Առաջավոր Ասիայի համար։ Հին Բաբելոնում հուլիս-օգոստոս ամիսները կոչվել են կրակի ամիս և զոդիակում նրանք պատկերվել են առյուծի կերպարանքով[21]։ Եգիպտոսում էլ Սոխմետ աստվածուհին՝ արևի աստծո կինը, առյուծի կերպարանք ուներ։

Հայ բանահյուսության մեջ պահպանված մի ավանդության համաձայն լուսինն ու արևը քույր ու եղբայր են համարվում, Մի օր քույր արևը ասում է, թե ինքը վախենում է գիշերը ման գալուց, ցերեկն էլ ամաչում է, երբ իրեն են նայում։ Լուսին եղբայրը ասում է, որ գիշերը ինքը կշրջի, թող ցերեկը նա պտտվի, միայն թե հետը վերցնի մի քանի խուրձ ասեղ և խրի իրեն նայողի աչքերը։ Այդպես էլ անում են։ Արևը նստած մի առյուծի մեջքին սլանում է երկնակամարի վրայով, և երեկոյան գնում հանգստանում է մոր գրկում։ Առյուծը իր վիթխարի թրով պաշտպանում է նրան քաջքերից[22]։

«Սասնա ծռերում» Մհեր-արև աստվածը կրում է առյուծաձև, առյուծասպան մականունը[23]։ Վերջին մականունը ցույց է տալիս, որ արևի մարդակերպ աստվածը դուրս է վանում իր կենդանակերպ զուգակցին։

Հետաքրքիր է նաև այն, որ Մհերի կողմից առյուծին սպանելու միջադեպը տեղի է ունենում ամռանը։

Ստացվում է, որ Մհերը—Առյուծ Մհերը, նախաքրիստոնեական Հայաստանում, ինչպես Միջագետքում հանդես եկող շատ աստվածություններ, պաշտվել է որպես ամռան արևի աստված։

Առյուծի ու արևի կապի մասին է խոսում հայ ժողովրդի մեջ արմատացած այն պատկերացումը, որ երբ առյուծի թաթը արնոտվում է, անպայման արևի խավարում է սպասվում։

Պատահական չէ, որ նախաուրարտական ու ուրարտական արվեստի հուշարձանների վրա էլ հաճախ են հանդիպում առյուծների պատկերներ։ Վրաստանում՝ Թրիալեթիում, ինչպես նաև Կոբանում գտնված ուշ բրոնզեդարյան

---

21 F. Lenormant, Les premières civilisations études d'histoire et d'archéologie, t. 2, Paris, 1877, էջ 74։

22 «Ազգագրական հանդես», Բ, 1897, էջ 216։

23 «Սասնա ծռերս», Երևան, 1936, Ա հատոր, պատում 9, էջ 130—131։

գոտիների վրա փորագրված առյուծները իրենց վրա կրում են արևի նշաններ՝ բազմաթև աստղեր, ճառագայթավոր սկավառակներ[24] (աղ. II, 2)։

Ավելի հետաքրքիր ու բազմակողմանի է Քալաքենդում Իվանովսկու կողմից հայտնաբերված բրոնզե գոտիներից մեկը[25]. Նրա շրջանակը ձևավորված է գալարվող պարույրներով, կենտրոնական դաշտը՝ իրար հետևից վազող առյուծներով, այծերով ու նրանց միջև վեր գալարվող օձերով։ Ստացվում է այն տպավորությունը, որ այստեղ դարձյալ գործ ունենք ամպրոպի և արևի պաշտամունքը մարմնավորող կենդանիների հետ։

Առյուծների կողքին պատկերված սվաստիկաները կարծես կասկած չեն թողնում, որ առյուծները կապված են արևի հետ։

Իր ներքին բովանդակությամբ այս գոտու հետ սերտորեն կապված է Լալայանի կողմից Նոր Բայազետում հայտնաբերված դաշույնի պատյանը, որի վրա փաստորեն զետեղված է երկնային էակների մի խումբ (օձեր, արևներ և առյուծ), որը դարձյալ հաստատում է մեր այն կարծիքը, թե արևն ու տարերքը (ամպրոպը) հանդես են գալիս մեծ մասամբ համատեղ և որ առյուծի կերպարներն ամենուրեք անքակտելիորեն կապվում են արևի պաշտամունքի հետ[26] (աղ. III, 1)։

Ուրարտական գոտիների ու վահանների վրա կան արևը խորհրդանշող իրական կամ թևավոր առյուծների պատկերներ, ինչպես նաև ամպրոպն ու կայծակը խորհրդանշող ցուլեր։ Ուրարտական խալդ աստվածը միշտ հանդես է գալիս առյուծի վրա կանգնած։

Արին-բերդում, խալդ աստծո տաճարի դահլիճում, օրնամենտալ որմնանկարների կողքին բացվել է նաև խալդի պատկերը՝ կանգնած առյուծի մեջքին[27], ինչպես Թեշուբը ցուլի մեջքին։ Անկասկած, խալդի պաշտամունքը կապ ունի արևի հետ։

Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում հայտնաբերված են առյուծի քանդակներ (Կարմիր բլուր, Գորիս) կամ առյուծի գլխով զարդարված իրեր, առյուծագլուխ ապարանջաններ[28] (աղ. II, 5)։

Դժվար է ասել, սրանք պատրաստվել են նախնադարյան մարդու կողմից հատկապես իբրև արևի պաշտամունքի խորհրդանիշեր, թե՞ պարզապես ունեցել են դեկորատիվ նշանակություն։ Պետք է ենթադրել, որ ամեն դեպքում գոյություն է ունեցել այս կենդանու պաշտամունքը, որոշ դեպքերում արևի հետ կապված, երբեմն էլ զուտ անկախ նրանից։

Նախահայկական և վաղ հայկական կրոնական դաղափարաբանության մեջ արևի պաշտամունքի հետ էր կապվում նաև ձին։

Ինչպես վերն արդեն նշվեց, բաբելական բնագրերի և բրոնզեդարյան Հայաստանի պատկերազարդ գոտիների սյուժեների համաձայն, արևն իր շրջապտույտը կատարում էր հրեղեն ձիերով լծված կառքի մեջ։

---

[24] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, стр. 51, рис. 48, 49.

[25] А. А. Ивановский, По Закавказью, МАК, вып. VI. Москва, 1911, табл. $I_{,2}$.

[26] *Ե. Լալայան, Դամբարանների պեղումները Հայաստանում, Երևան, 1930, էջ 162, նկ. 119։*

[27] К. Л. Оганесян, Арин-Берд, Ереван, 1961, рис. 32.

[28] К. Х. Кушнарева, Некоторые памятники эпохи поздней бронзы в Нагорном Карабахе, СА XXVII, 1957, стр. 139, рис. $3_{,4}$.

1

2



3

Աղյուսակ I



1

2



3

4



5

Աղյուսակ II



1



2

Աղյուսակ III

Հետաքրքիր է, որ հայ ժողովրդական շատ հեքիաթներում հրեղեն ձին, որը միշտ գտնվում է ծովի մեջ, իր հերոսին ծովի մի ափից մյուսն է թռցնում, կամ ծովի մակերևույթից մինչև արևի գունդը։

Հին աշխարհում գոյություն ունեցող պատկերացումների համաձայն արևը ծովի ջրերի մեջ լողանալով նորից երիտասարդանում էր, ուժեղանում[29]։ Այս առիթով, չմոռանանք նշել Սասնա ծռերի՝ Մհեր-Միհր-Արևին և Սանասար-Բաղդասար-ամպրոպ-կայծակին, որոնք իջնում էին ծովի հատակը և նոր ավյունով լեցուն դուրս գալիս այնտեղից։

Ինչպես մեզ հայտնեց խեթագետ Վ. Ն. Խաչատրյանը, խեթական Արինա քաղաքը համարվում էր արևի պաշտամունքի կենտրոն։ Խեթերեն այդ անունը բառացի նշանակում է աղբյուր։ Ըստ էության այստեղ ևս արևը կապ է ունեցել ջրի հետ։

Մ. Աբեղյանը գրում է. «Վանի շրջանում արևի մասին պատմում են, որ երեկոյան նա «մայր է մտնում» Վանա ծով, ծովում լողանում է, որպեսզի օրվա պտույտից հետո հանգստանա։ Հավատում են, որ նրա անկողինը գցած է ծովի հատակին փրփուրի վրա և ձյունաթույր ու շառագույն ամպերը արևի անկողնի վարագույրներն են։ Արշալույսից առաջ հրեշտակները արևին հրեղեն շորեր են հագցնում և նրա անկողինը պատրաստում։ Երբ արևը երեսը լվանում է սարերն ու դաշտերը ջրի ցողով են ցողվում։ Թռչունները քնից վեր են թռչում և սկսում են ծլվլալ։ Արևելքում բարձր լեռներից սկզբում դուրս են գալիս արև արքայի 12 թիկնապահները, որոնք իրենց ճառագայթավոր լուսեղեն ճիպոտներով հարվածում են լեռներին, որոնք իրենց գլուխներն են խոնարհում արև արքայի առաջ։ Վերջինս այնժամ հանկարծ ոսկեհեր հրեղեն գլուխն է շրջանագծում, ողջունում է ողջ բնությանը և բարձրանում երկնակամարը»[30]։

Ձիու արևի հետ կապված լինելու հետաքրքիր փաստ է նշում նաև ֆրանսիացի ականավոր հնագետ Դեշելետը։

Եվրոպայի բրոնզեդարյան ժամանակաշրջանին պատկանող մի կրոմլեխի շուրջանակի դասավորված բոլոր քարերի վրա հագցված են եղել ձիու գանգեր։ Հեղինակը գտնում է, որ դրանք անմիջական կապ ունեն արևի պաշտամունքի հետ։ Ըստ Դեշելետի, կրոմլեխի շրջանի ձև ունենալը ինքնըստինքյան արևի արտահայտությունն կարելի է համարել, իսկ ձիերը արևի սիմվոլներ։

Մեր վերոհիշյալ դիտողությունները հաստատվում են մ. թ. ա. 5-րդ դարի պատմիչ Քսենոֆոնի վկայությամբ, որի համաձայն հին Հայաստանում հայերը արևին ձիեր էին զոհաբերում[31]։

Եթե առյուծն ու թռչունը խորհրդանշում էին արևը, տարվա տարբեր եղանակներին համապատասխան, ապա, թվում է, թե ձին հանդիսանում է նրա խորհրդանիշը անկախ տարվա որևէ եղանակից, քանի որ նա շրջում էր ձիով կամ նրան լծված կառքով տարվա բոլոր ժամանակներում։

Ինչ խոսք, որ ցուլը նույնպես կապվում է արևի պաշտամունքի հետ, չնայած, ավելի հաճախ նա խորհրդանշում է ամպրոպն ու կայծակը (տարերքը) և սերտորեն առնչվում պտղաբերության պաշտամունքին։

---

29 F. Lenormant, նշվ. աշխատությունը, էջ 76։

30 M. Abeghian, Der armenische Volksglaube, Leipzig, 1899, էջ 43։

31 Ксенофонт, Анабасис, Москва—Ленинград, 1951, книга IV, гл. V (34), стр. 113—114.

Որոշ երկրներում արևի աստվածը պատկերվում է ցուլի ուղեկցությամբ. ինչպես, օրինակ, Միհրը՝ Իրանում։

Այսպիսով, վերը շարադրվածի հիման վրա կարող ենք ասել, որ Հայկական լեռնաշխարհում արևի պաշտամունքը լայն տարածում է ունեցել։

Նախապատմական ժամանակներում արևը պատկերել են զանազան ձևերով. երկրաչափական տարրերով ու մարմիններով, զանազան կենդանիների, ինչպես նաև մարդկային և անտրոպոմորֆ կերպարանքով։

Արևի կենդանակերպ և մարդակերպ խորհրդանիշները հիմնականում հանդիպում են նախնադարյան գրաֆիկ արվեստում՝ բրոնզե գոտիների վրա, առանձին արձանիկների ձևով, իսկ ավելի վաղ ժամանակներում՝ նաև ժայռափոր քանդակների մեջ։

Արևը Հայկական լեռնաշխարհում տարվա տարբեր եղանակներին համապատասխան պատկերվել ու խորհրդանշվել է զանազան կենդանիների ձևով, ուստի և զարմանալի չէ այն, որ նա ունի կենդանական հարուստ ու բազմաշատ խորհրդանիշներ, որոնք դեռևս լիակատար ուսումնասիրության մեծ կարիք են զգում։

Հայ ազգագրության և բանահյուսության մեջ պահպանված տվյալները ապացուցում են, որ արևի պաշտամունքը բրոնզեդարյան և շատ ավելի վաղ ժամանակներից պահպանվել է հայ ժողովրդի մեջ նաև քրիստոնեության ժամանակ, դեռ ավելին, արևի պաշտամունքի վերապրուկները մնացել են և ապրում են հայ ժողովրդի մեջ նաև մեր օրերում։